Կապիկի ծաղիկ

Հաճախակի տրվող հարցեր ծնողների համար

Ի՞նչ է կապիկի ծաղիկը

Կապիկի ծաղիկը վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկ վիրուսից: Այն հայտնաբերվել է 1958 թվականին, երբ ծաղիկ հիշեցնող հիվանդության երկու բռնկում եղավ կապիկների այն խմբերում, որոնց պահում էին հետազոտությունների համար: Մարդկանց մոտ կապիկի ծաղիկով վարակման առաջին դեպքը գրանցվել է 1970 թվականին: Մինչև 2022 թվականի մայիս ամիսը այն հազվադեպ էր հանդիպվում Միացյալ Նահանգներում կամ շատ այլ երկրներում:

Գոյություն ունի կապիկի ծաղիկի 2 տեսակ: Այն տեսակը, որը ներկայումս գոյություն ունի ԱՄՆ-ում, ավելի թույլ է: Ամենատարածված ախտանիշը ցանն է, որը կարող է կապված լինել կամ չլինել գրիպի նման ախտանիշների հետ: Մարդկանց մեծ մասը հիվանդանոցում բուժվելու կարիք չի ունենում և կազդուրվում է 2-4 շաբաթվա ընթացքում: Կապիկի ծաղիկի դեմ հասանելի են պատվաստանյութեր և հակավիրուսային բուժումներ: Կապիկի ծաղիկի մասին ավելի շատ ընդհանուր տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հասցեով.

- Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջության Վարչության (LAC DPH) կապիկի ծաղիկի կայքէջ՝ ph.lacounty.gov/monkeypox
- CDC-ի հաճախակի տրվող հարցեր կապիկի ծաղիկի մասին

Որո՞նք են կապիկի ծաղիկի ախտանիշները

Կապիկի ծաղիկի ախտանշանները սովորաբար դրսևորվում են վարակակրի հետ շփումից հետո 3 շաբաթվա ընթացքում:

Ամենատարածված ախտանիշը ցանն է, որը կարող է՝

- Նման լինել ելուստների, պզուկների, բշտիկների, խոցերի կամ թեփի (կեղևակալած մաշկի): Վարակը կարող է տևել 2-4 շաբաթ, մինչև բոլոր կեղևներն ընկնեն և նոր մաշկ ձևավորվի վնասված հատվածների տեղում:
- Կարող է առաջանալ սեռական օրգանների (առնանդամ, ամորձիներ, սեռական շուրթեր և հեշտոց), հետանցքի, բերանի վրա կամ դրանց մոտ կամ մարմնի այլ մասերի վրա, ինչպիսիք են ձեռքերը, ոտքերը, կրծքավանդակը և դեմքը:
- Տարածված լինել ողջ մարմնի վրա կամ կարող է սահմանափակվել մեկ հատվածում: Կարող են լինել ընդամենը մի քանի ելուս կամ բշտիկ:
- Լինել ցավոտ և/կամ քոր առաջացնող: Որոշ մարդիկ խիստ ցավեր են ունենում, հատկապես, եթե ցանն իրենց բերանում կամ հետանցքում է:

Մարդկանց մոտ կարող են առաջանալ նաև գրիպին բնորոշ ախտանիշներ: Դրանք կարող են ի հայտ գալ ցանի առաջանալուց 1-4 օր առաջ կամ հետո: Դրանք ներառում են ջերմություն/դող, այտուցված գեղձեր, էներգիայի պակաս, մկանային ցավեր և գլխացավեր: Ոչ բոլոր ցան ունեցողներն ունեն այդ համախտանիշները:

Կապիկի ծաղիկով հիվանդների մեծ մասն ապաքինվում է 2-4 շաբաթվա ընթացքում:

Թեև մարդկանց մեծամասնության համար վտանգը մնում է փոքր, յուրաքանչյուր ոք, ով ունենում է նոր անբացատրելի ցան կամ մաշկի վերքեր, պետք է դիմի իր բժշկին: Մարդիկ կարող են նաև զանգահարել Հանրային Առողջության զանգերի կենտրոն 1-833-540-0473 համարով (բաց է ամեն

օր՝ առավոտյան ժամը 8:00-ից երեկոյան 08:30-ը), եթե չունեն բժիշկ կամ առողջության ապահովագրություն:

Ախտանիշների մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության Կապիկի ծաղիկի ախտանիշներ էջում:

Ինչպե՞ս է տարածվում կապիկի ծաղիկ հիվանդությունը

Հայտնի է, որ կապիկի ծաղիկը տարածվում է սերտ, մտերմիկ (ինտիմ) և/կամ երկարատև շփման միջոցով, ներառյալ՝

- Կապիկի ծաղիկով հիվանդ մարդու ցանի, վերքերի կեղևի կամ մարմնի հեղուկների հետ մաշկը մաշկին անմիջական շփում
- Շփում այն առարկաների և գործվածքների հետ, որոնք օգտագործվել են կապիկի ծաղիկով հիվանդի կողմից
- Շփում կապիկի ծաղիկով հիվանդ որևէ մեկի շնչառական արտազատուկների հետ

Դրա առաջացման պատճառներն են՝

- Սեռական հարաբերություն և այլ մտերմիկ (ինտիմ) կապեր, ներառյալ համբուրվելը, մերսումը, գրկախառնվելը
- Չմաքրված գործվածքների և իրերի համատեղ օգտագործում (օրինակ՝ հագուստ, անկողնային պարագաներ, սրբիչներ, խաղալիքներ)
- Երկարատև, մտերմիկ, դեմ առ դեմ շփում, ինչպես օրինակ՝ շատ մոտ տարածության վրա դեմ առ դեմ երկար զրույց (մոտ 3 ժամ կամ ավելի)
- Կապիկի ծաղիկով հիվանդի տանը ապրելը, նրա մահճակալից օգտվելը կամ նրան խնամելը:

Կապիկի ծաղիկով հիվանդ մարդը կարող է վարակել ուրիշներին՝ սկսած ախտանշանների առաջանալու պահից, մինչև այն պահը, երբ ցանը բուժվել է, կեղևակալած մաշկն ընկել է և մաշկի նոր շերտ է առաջացել: Դա սովորաբար տևում է 2-4 շաբաթ:

Կապիկի ծաղիկով հղի անձը կարող է վիրուսով վարակել իր պտղին ընկերքի միջոցով:

Կապիկի ծաղիկը շատ ավելի պակաս վարակիչ է, քան COVID-19-ը: Այն ՉԻ փոխանցվում հիվանդի հետ պատահական (կարճատև) զրույցների միջոցով կամ նրա կողքով քայլելիս:

Գիտնականները դեռ շարունակում են ավելի ուսումնասիրել, թե ինչպես է տարածվում կապիկի ծաղիկը, այդ թվում՝

- Արդյոք վիրուսը կարող է տարածվել, երբ անձը չունի ախտանշաններ,
- Որքան հաճախ է այն տարածվում շնչառական արտազատուկների միջոցով և
- Ցանկացած այլ տեսակի շփում կամ վարքագիծ, որը կարող է մարդկանց համար ավելի վտանգավոր լինել:

Տե՛ս ph.lacounty.gov/monkeypox՝ լրացուցիչ տեղեկություններ և ամենավերջին տեղեկությունները ստանալու համար:

Ինչո՞վ են տարբերվում կապիկի ծաղիկը և COVID-19-ը

Չնայած, որ ԱՄՆ-ում կապիկի ծաղիկի այս հանկարծակի բռնկումը կարող է անհանգստություն պատճառել COVID-19 համավարակի պայմաններում ավելի քան երկու տարի մնալուց հետո՝ կապիկի ծաղիկը շատ ավելի պակաս վարակիչ է, քան COVID-19-ը: Կապիկի ծաղիկով հիվանդանալու ընդհանուր վտանգը ներկայումս շատ ցածր է:

COVID-19-ը նոր վիրուս էր, որն առաջին անգամ նկատվեց 2019 թվականին: Կապիկի ծաղիկը նոր չէ, և դրա մասին հայտնի է երկար տարիներ:

Կապիկի ծաղիկը նաև չի տարածվում այնպես, ինչպես COVID-19-ը:

- Բռնկման ընթացքում կապիկի ծաղիկի տարածման հիմնական տարբերակը կապիկի ծաղիկով հիվանդի հետ սերտ, մտերմիկ (ինտիմ) և/կամ երկարատև մաշկ-մաշկ շփումն է:
- COVID-19 վարակի տարածման հիմնական տարբերակը օդում առկա փոքրիկ կաթիլներն են, որոնք արտանետվում են, օրինակ, երբ մենք շնչում ենք, խոսում, փռշտում կամ հազում: Մարդը կարող է տարածել COVID-19 վարակը, անգամ եթե չունի ախտանիշներ:

Արդեն գոյություն ունի կապիկի ծաղիկի դեմ պատվաստանյութ և հակավիրուսային դեղամիջոց:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչության՝ Կապիկի ծաղկի և COVID-19-ի համեմատություն կայքէջ:

Արդյո՞ք իմ երեխան կապիկի ծաղկով վարակվելու վտանգի տակ է

Ոչ, եթե նա սերտ, անձնական կապի մեջ չի եղել կապիկի ծաղիկով հիվանդի հետ: Բռնկման ժամանակ երեխաների՝ կապիկի ծաղիկով վարակվելու վտանգը շատ փոքր է: Թեև երեխաների հիվանդանալու դեպքեր պատահել են ԱՄՆ-ում, դրանք շատ հազվադեպ են:

Երեխաները կապիկի ծաղիկով հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ են, եթե նրանք ապրում են կապիկի ծաղիկով հիվանդի հետ, հատկապես, եթե նրանք հիվանդի հետ օգտվում են միևնույն մահճակալից կամ այլ պարագաներից: Եթե Դուք ունեք կամ կասկած կա, որ ունեք կապիկի ծաղիկ, միջոցներ ձեռնարկեք Ձեր տան անդամներին պաշտպանելու համար: Տե՛ս՝ Կապիկի ծաղիկով հիվանդ մարդկանց մեկուսացման հրահանգները:

Այն դեռահասները, ովքեր ֆիզիկական ինտիմ/սեռական ակտիվ կապ են ունենում ուրիշների հետ կամ հայտնվում են այնպիսի իրավիճակներում, ինչպիսիք են երեկույթները, որտեղ նրանք կարող են մաշկ-մաշկ շփում ունենալ, ևս գտնվում են կապիկի ծաղիկով հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ: Սա հատկապես իրատեսական է, եթե նրանք այդ գործողություններն իրականացնում են այն մարդկանց խմբերի հետ, որտեղ տարածվում է կապիկի ծաղիկը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի՝ Ապահով սեքս, հասարակական հավաքներ և կապիկի ծաղիկ կայքէջը:

Երեխաների շրջանում կապիկի ծաղիկի մասին տեղեկատվությունը սահմանափակ է, քանի որ այն շատ հազվադեպ է, սակայն ապացույցներ կան, որ կապիկի ծաղիկ հիվանդությունը կարող է ավելի ծանր ընթացք ստանալ մինչև 8 տարեկան երեխաների մոտ: Այն նաև ավելի ծանր կարող է լինել նրանց մոտ, ովքեր ունեն թուլացած իմունային համակարգ կամ ունեն մաշկի որոշակի հիվանդություններ, օրինակ՝ էկզեմա:

Կա՞ն թեստավորման տարբերակներ այն երեխաների համար, ովքեր կարող են վարակված լինել կապիկի ծաղիկով

Այո: Դիմք Ձեր բժշկին, եթե կարծում եք, որ Ձեր երեխան կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ կարող են վարակված լինել կապիկի ծաղիկով: Դուք կարող եք նաև զանգահարել Հանրային Առողջության Ձանգերի Կենտրոն՝ 1-833-540-0473 (բաց է ամեն օր՝ առավոտյան ժամը 8:00-ից երեկոյան 08:30-ը), եթե Ձեր երեխան չունի բժիշկ կամ առողջության ապահովագրություն: Եթե Ձեր երեխան ունի նոր անբացատրելի ցան, և բժիշկը կարծում է, որ դա կարող է պայմանավորված լինել կապիկի ծաղիկով, նա կարող է քսուկ (նմուշ) վերցնել վնասված հատվածներից: Քսուկներն ուղարկվում են լաբորատորիա՝ թեստավորման:

Հիշեք, որ ցաները տարածված են երեխաների մոտ և կարող են առաջանալ տարբեր պատճառներով: Քանի որ կապիկի ծաղիկը շատ հազվադեպ է պատահում երեխաների մոտ, ցաների մեծ մասը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է այլ բանով: Եթե ցանը նման չէ կապիկի ծաղիկին, բժիշկը կարող է թեստ չանել, հատկապես, եթե նրանք այլ կասկածներ ունեն և/կամ երեխայի հետ հայտնի կամ ենթադրվող շփումներ չեն եղել:

Կապիկի ծաղիկի թեստի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Վարչության կապիկի ծաղիկի կայքէջ՝ ph.lacounty.gov/monkeypox:

Արդյո՞ք գոյություն ունեն բուժման տարբերակներ այն երեխաների համար, որոնք կարող են վարակված լինել կապիկի ծաղիկով

Այո: Եթե երեխան վարակված է կապիկի ծաղիկով, ապա նա կարող է բուժվել: Կապիկի ծաղիկով հիվանդ շատ մարդիկ հիվանդանում են վիրուսի թեթև տաբերակով և ապաքինվում են առանց որևէ հակավիրուսային բուժման:

Գոյություն ունի FDA-ի կողմից հաստատված հակավիրուսային դեղամիջոց, որն օգտագործվում է կապիկի ծաղիկի բուժման համար, որը կոչվում է տեքովիրիմատ (կամ TPOXX, արտասանվում է TEE-pocks), որը կարող է օգտագործվել կապիկի ծաղիկով հիվանդ մարդկանց բուժման համար: Վիրուսները, որոնք առաջացնում են ջրծաղիկ և կապիկի ծաղիկ, ծագում են վիրուսների միևնույն ընտանիքից, ուստի դեղամիջոցն օգտակար է երկուսի դեմ:

TPOXX կոչվող հակավիրուսային դեղամիջոցը կարող է նշանակվել կապիկի ծաղիկի ծանր ընթացքով տառապող մարդկանց, ներառյալ զգայուն հատվածների ախտահարումների կամ ցավի համար, որը հնարավոր չէ վերահսկել առանց դեղատոմսի վաճառվող դեղամիջոցներով: Այն կարող է տրվել նաև կապիկի ծաղիկ ունեցող այն մարդկանց, ովքեր ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան: Երեխաները՝ հատկապես մինչև 8 տարեկանները, կարող են ծանր հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ լինել, եթե նրանք վարակվեն կապիկի ծաղիկով:

Ի՞նչ տեղի կունենա, եթե իմ երեխայի դպրոցում կամ խնամքի կենտրոնում կապիկի ծաղիկ հայտնաբերվի

Յուրաքանչյուրը կարող է վարակվել կապիկի ծաղկով, եթե նա վարակված անձի հետ սերտ անձնական շփում ունենա: Այնուամենայնիվ, այս պահին դպրոցներում և երեխաների խնամքի այլ հաստատություններում վտանգը շատ փոքր է: Դասասենյակում կապիկի ծաղիկի

ախտանիշեր ունեցող մեկի հետ պարզապես նստելը վարակի հետ շփման և վարակվելու շատ փոքր վտանգ է ներկայացնում:

Եթե պարզվել է, որ Ձեր երեխան կամ դեռահասը դպրոցում վարակվել է կապիկի ծաղիկով, Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությունը կհամագործակցի դպրոցի հետ, որպեսզի խորհուրդներ տա, թե ինչ պետք է անեն բոլոր նրանք, ովքեր վարակվել են կամ կարող են վարակված լինել:

Սովորողների մեծամասնությունը կարող է շարունակել հաճախել դպրոց և դպրոցին առնչվող այլ միջոցառումներ, նույնիսկ եթե նրանք սերտ շփում են ունեցել կապիկի ծաղիկով հիվանդի հետ, քանի դեռ նրանց մոտ ախտանիշներ չեն առաջացել:

Արդյո՞ք իմ երեխան պետք է տանը մնա՝ դպրոցից կամ մանկապարտեզից հեռու, եթե վարակված է կապիկի ծաղիկի վիրուսով

Կապիկի ծաղիկով հիվանդ մարդը կարող է վարակել ուրիշներին՝ սկսած ախտանշանների առաջանալու պահից մինչև այն պահը, երբ ցանը բուժվել է, կեղևակալած մաշկը ընկել է և մաշկի նոր շերտ է առաջացել: Դա սովորաբար տևում է 2-4 շաբաթ:

Կարևոր է, որ կապիկի ծաղիկով հիվանդ մարդիկ հետևեն Կապիկի ծաղիկով հիվանդների մեկուսացման հրահանգներին: Նրանք պետք է մնան տանը և հեռու լինեն ուրիշներից, քանի դեռ վարակակիր են: Երբ նրանք բավարարեն հատուկ չափանիշները, նրանք կարող են սկսել որոշակի գործողություններ կատարել տնից դուրս, քանի դեռ դրանց համար չի պահանջվում սերտ ֆիզիկական շփում ուրիշների հետ:

Բոլոր երեխաները պետք է մնան տանը, եթե կասկած կա, որ նրանք ունեն կապիկի ծաղիկ, մինչև բժիշկը գնահատի նրանց վիճակը և հայտնի դառնան բոլոր թեստերի արդյունքները:

Կապիկի ծաղիկով վարակված երեխաները, ովքեր 8-ից տարեկանից փոքր են, պետք է մնան տանը՝ դպրոցից կամ մանկապարտեզից հեռու, մինչև մաշկի բոլոր վնասվածքները բուժվեն և ցանկացած այլ ախտանիշներ, ներառյալ ջերմություն, չունենան առնվազն 48 ժամ՝ առանց ջերմությունը իջեցնող դեղամիջոցների օգտագործման: Այդ փոքր երեխաներին տանը պահելու երկու պատճառ կա: 8-ից ցածր տարիքի երեխաները, որոնք վարակվել են կապիկի ծաղկով, ավելի հավանական է, որ կարող են ծանր հիվանդանալ: Եվ նրանք ավելի հավանական է, որ ավելի անմիջական ֆիզիկական շփում կունենան միմյանց հետ պարզապես մշտական խաղի և օրվա ընթացքում հաղորդակցման միջոցով: Մինչև 8 տարեկան երեխաներին տանը պահելը նրանց հեռու է պահում այնպիսի միջավայրից, որտեղ կան շատ փոքր երեխաներ, որոնք կարող են վարակվել:

Կապիկի ծաղիկով հիվանդ երեխաները, ովքեր 8 տարեկան և ավելի բարձր տարիքի են, կարող են դպրոց հաճախել նախքան բոլոր վերքերի լիովին բուժվելը, քանի դեռ բավարարված են որոշակի չափանիշներ, ներառյալ այն, որ վնասվածքները կարող են ծածկված լինել: Այս չափանիշները թվարկված են Կապիկի ծաղիկով հիվանդ մարդկանց մեկուսացման հրահանգներում: Հրահանգները նաև բացատրում են այն նախազգուշական միջոցները, որոնք պետք է պահպանվեն, մինչև անձը պատրաստ լինի վերսկսել բնականոն գործունեությունը: Նախքան Ձեր երեխայի դպրոց վերադառնալը, LAC DPH-ն կաշխատի Ձեզ հետ՝ ուղղորդելու շարժվել լավագույն ճանապարհով: DPH-ը ակտիվ ներգրավվածություն է ունենում, եթե երեխան կապիկի ծաղիկ ունի, և հասանելի է ընտանիքներին՝ ուղղորդում և օգնություն տրամադրելու համար:

Որտե՞ղ կարող եմ ստանալ կապիկի ծաղիկի դեմ պատվաստանյութ իմ կամ իմ երեխայի համար

Եթե Դուք կամ Ձեր երեխան պատկանում եք կապիկի ծաղիկի դեմ պատվաստման իրավասու խմբերից մեկին, այցելեք Հանրային Առողջության պատվաստումների կայք կամ այցելեք Myturn.ca.gov՝ Ձեր մոտակայքում վայր գտնելու համար: Երբ Դուք գնում եք այդ վայր, պատրաստ եղեք հաստատել, որ Դուք բավարարում եք կապիկի ծաղիկի դեմ պատվաստանյութ ստանալու չափանիշներին:

Այցելեք ph.lacounty.gov/monkeypox/vaccine.htm՝ տեսնելու համար, թե ով է պատվաստման համար իրավասու: